ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 07.09.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ 88/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 19.08.2016թ. ներկայացրած բողոքը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, ի լրումն բողոքի ներկայացված 06.09.2016թ. գրությունը, Սարավանի համայնքապետարանի 23.08.2016թ. գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները և ԳԲԽ-88/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 05.09.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 19.08.2016թ. ներկայացրած բողոքով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ Սարավանի համայնքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից Սարավան գյուղի գյուղամիջյան ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՀՊ-ԲԲԱՇՁԲ-1/2» ծածկագրով բաց ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, 31-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերով սահմանված պահանջները, մասնավորապես, պատշաճ չեն գնահատվել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի արդյունքում, գնահատող հանձնաժողովի 25.07.2016թ. որոշմամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես առաջին տեղ

զբաղեցրած մասնակից, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է 29.07.2016թ.: 08.08.2016թ. Ընկերությանն էլեկտրոնային եղանակով ծանուցվել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ոչ ամբողջական լինելու մասին, որտեղ նշված է եղել, որ վերջինիս կողմից ներկայացվել է բեռնատար մեքենա ոչ ինքնաթափ, բացակայում է ներկայացված ամբարձիչի տեխնիկական անձնագիրը, ներկայացված ինժեներ շինարարի մասնագիտական որակավորման հավաստագիրը հստակ պատկերացում չի տալիս ինժեներ շինարարի որակավորման մասին:

Պատվիրատուն ծանուցմամբ խնդրել է Ընկերությանն Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով անհամապատասխանությունները շտկել և ներկայացնել Սարավանի համայնքապետարան: Ընկերությունը նշել է, որ 09.08.2016թ. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի աշխատակիցը պահանջվող (ենթադրյալ սխալ ներկայացված) ճշտված փաստաթղթերը առձեռն հանձնել է Սարավանի համայնքապետարան, միևնույն ժամանակ ճշտված փաստաթղթերի մեկ օրինակը 09.08.2016թ. ժամը 13:00-14:00-ի սահմաններում «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով ուղարկվել է Պատվիրատուի հասցեով:

Սակայն, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ոչ մի ծանուցում չի ստացել ուղարկված շտկված փաստաթղթերի վերաբերյալ և նույնիսկ չի ունեցել հնարավորություն էլեկտրոնային եղանակով կապ հաստատելու Սարավանի համայնքապետարանի հետ՝ վերջինիս կողմից էլեկտրոնային փոստն արգելափակելու և հեռախոսազանգերին չպատասխանելու պատճառով: 2016թ. օգոստոսի 11-ին հրապարակվել է գնահատող հանձնաժողովի թիվ 5 որոշումը՝ Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին: Որոշմամբ Ընկերության կողմից ներկայացված հայտը որակվել է որպես հրավերի պահանջներին անհամապատասխան: 11.08.2016թ. ընդունված պայմանագիր կնքելու մասին որոշմամբ ընդամենը նշվել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սակայն Պատվիրատուն պարտավոր էր հստակ նկարագրեր, թե ինչ ի նկատի ունի՝ նշելով, որ հայտը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պահանջներին և, թե հայտը լրացնելիս մասնակիցը կոնկրետ ինչ սխալ է թույլ տվել, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին: Այսպիսով, Պատվիրատուն, հաշվի չառնելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ճշտված փաստաթղթերը, ընտրված մասնակից է ճանաչել «Վայքի

ՃՇՇ» ԲԲԸ-ին: Մինչդեռ, Ընկերությունը, որպես նվազագույն գնային առաջարկ և հրավերի պահանջներին համապատասխանող հայտ ներկայացրած, ինչպես նաև Պատվիրատուի կողմից պահանջվող սխալները ժամանակին ուղղած և փաստաթղթերը ճշտված տարբերակով պատշաճ ձևով վերջինիս հանձնած մասնակից պետք է զբաղեցներ առաջին տեղը:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.08.2016թ. թիվ 5 որոշումը և «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին ճանաչել որպես նվազագույն գնային առաջարկ և հրավերի պահանջներին համապատասխանող հայտ ներկայացրած մասնակից:

2. **<u>ՀՀ Վայոց ձորի մարզի Սարավան համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>**

Սարավանի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.08.2016թ. գրությամբ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ 25.07.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Կարգի 49-րդ կետով նախատեսված ժամկետում դրական եզրակացություն ստանալուց հետո, 29.07.2016թ. ծանուցվել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին՝ համաձայն Ընթացակարգի հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետի, որտեղ առաջարկվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նշված կազմակերպության կողմից, որակավորման չափանիշների գնահատման համար ներկայացված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական:

Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «ՍՀՊ-ԲԸԱՇՁԲ-1/2» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի 8.1.2 կետը, էլեկտրոնային եղանակով ծանուցել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, մանրամասն նշելով դրանք:

Այնուհետև, 10.08.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ, սահմանված ժամկետում անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթեր

չներկայացնելու պատճառով, նշված կազմակերպության հայտը գնահատվել է անբավարար, քանի որ բողոքաբերը մեկ աշխատանքային օրում չի ներկայացրել շտկված փաստաթղթերը:

Պատվիրատուն նշել է, որ իրականում Ընկերությունը փաստթղթերը ներկայացրել է աշխատանքային օրվա ավարտից մի քանի ժամ հետո, համայնքապետարանի վարչական շենքից դուրս, փողոցում, այդ իսկ պատճառով աշխատանքային օրվա ավարտից հետո ներկայացված փաստաթղթերը չէին կարող հիմք հանդիսանալ արդեն գնահատված որակավորման չափանիշները նորից գնահատելու համար:

Պատվիրատուն նշել է, որ ըստ Ընկերության՝ 11.08.2016թ. պայմանագիր կնքելու որոշմամբ հստակ չեն նկարագրվել Օրենքի 5-րդ հոդվածի պահանջները, մինչդեռ Ընկերությանը սահմանված կարգով ներկայացվել են բոլոր ծանուցումները, որտեղ մանրամասն ներկայացվել է անճշտությունը:

Ինչ վերաբերում է Սարավան համայնքի պաշտոնական էլեկտրոնային փոստի համայնքապետարանի կողմից արգելափակմանը, ապա դա անհնար է, քանի որ էլեկտրոնային փոստի կառավարման սերվերները գտնվում են համայնքապետարանի իրավասություններից դուրս և դրա ենթադրյալ արգելափակումն անհնար է Պատվիրատուի կողմից:

Պատվիրատուն մինչև այժմ հայփոստից տվյալ Ընթացակարգին առընչվող նամակ չի ստացել: Հեռախոսազանգերի վերաբերյալ Պատվիրատուն նշել է, որ համայնքապետարանում հեռախոսակապ չկա, հրավերում նշված է համակարգողի հեռախոսահամարը:

3. ԳԲԽ-88/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 05.09.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 19.08.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-88/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-88/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Սարավանի համայնքապետարանի կողմից Սարավան գյուղի գյուղամիջյան ճանապարհների հիմնանորագման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՀՊ-ԲԸԱՇՁԲ-1/2» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն և «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2016թ. ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 1.4 կետով որոշում է կայացվել գնային առաջարկի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղերած մասնակից ճանաչել «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:

3. Պատվիրատուն 29.07.2016թ. ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.07.2016թ. ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 1.4 կետի որոշմամբ՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, միաժամանակ առաջարկելով, որ Ընթացակարգի հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությունը ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.08.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության՝

•1-ին կետով արձանագրել է, որ «ՍՀՊ-ԲԸԱՇՁԲ-1/2» ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հրավերով սահմանված փաստաթղթերը ոչ ամբողջական (հրավերով պահանջվել է ինքնաթափ բեռնատար մեքենա, ներկայացվել է ոչ ինքնաթափ բեռնատար մեքենա, բացակայում է ամբարձիչի տեխնիկական անձնագիրը, պահանջվել է ինժեներ-շինարարի որակավորում, ներկայացվել է մասնագիտական այլ որակավորում, որտեղ հստակ նշված չէ ինժեներ շինարարի որակավորումը),

•2-րդ կետով որոշել է՝ ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի 8.1.2 կետով, էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

5. Պատվիրատուն 08.08.2016թ. ժամը 16:00-ին էլեկտրոնային ծանուցմամբ Ընկերությանը հայտնել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2016թ. ժամը

12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ կայացված որոշման մասին՝ նշելով բոլոր անհամապատասխանությունները և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք և ներկայացնել Սարավանի համայնքապետարան:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.08.2016թ. ժամը 18:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է հետևյալը. ընդունել ի գիտություն, որ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին առաջարկվել էր շտկել որակավորման չափանիշները հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերում տեղ գտած թերությունները, ինչը սակայն օրենքով սահմանված կարգով չի ներկայացվել գնահատող հանձնաժողովին:

Ղեկավարվելով Ընթացակարգի հրավերի պահանջներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Ընկերության որակավորման չափանիշները գնահատել անբավարար:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.08.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 5 արձանագրության 2-րդ կետով, հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները, որոշել է ընտրված մասնակից ճանաչել «Վայքի ՃՇՇ» ՓԲԸ-ին:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 11.08.2016թ. թիվ 5 որոշմամբ հրապարկել է Ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, համաձայն որի՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է Ընթացակարգի հրավերի պահանջներին չհամապատասխանող:

9. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-88/16 բողոքը քննող հանձնաժողովի, 25.08.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը քննելով «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի 19.08.2016թ. ներկայացրած բողոքը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման

չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ օրենքով նախատեսված մասնակցության իրավունքի և հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների

գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը, որպես Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին առաջարկել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.08.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության՝ 1-ին կետով արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական, այն է՝ հրավերով պահանջվել է ինքնաթափ բեռնատար մեքենա, ներկայացվել է ոչ ինքնաթափ բեռնատար մեքենա, բացակայում է ամբարձիչի տեխնիկական անձնագիրը, պահանջվել է ինժեներ-շինարարի որակավորում, ներկայացվել է մասնագիտական այլ որակավորում, որտեղ հստակ նշված չէ ինժեներ շինարարի որակավորումը, իսկ 2-րդ կետով որոշել է՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Պատվիրատուն ***08.08.2016թ. ժամը 16:00-ին էլեկտրոնային ծանուցմամբ*** Ընկերությանը հայտնել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրությամբ կայացված որոշման մասին՝ նշելով բոլոր անհամապատասխանությունները և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք և ներկայացնել Սարավանի համայնքապետարան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ***09.08.2016թ. ժամը 18:00-ին*** տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին առաջարկվել էր շտկել որակավորման չափանիշները հիմնավորելու նպատակով ներկայացված փաստաթղթերում տեղ գտած թերությունները, սակայն վերջինիս կողմից դրանք չեն ներկայացվել գնահատող հանձնաժողովին:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ 09.08.2016թ. «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի աշխատակիցը շտկել է անհամապատասխանությունը և պահանջվող փաստաթղթերն առձեռն հանձնել է Սարավանի համայնքապետարան, ինչպես նաև պահանջվող ճշտված որակավորման փաստաթղթերի մեկ օրինակը 09.08.2016թ. ժամը 13:00-14:00-ի սահմաններում փոստով ուղարկել է Պատվիրատուի համապատասխան հասցեին, ապա այս կապակցությամբ Խորհուրդն արձանագրում է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից վերը նշված փաստը հավաստող հիմնավոր ապացույց չի ներկայացվել, ինչպես նաև չի ներկայացվել որևէ ապացույց վերը նշված փաստաթղթերը Պատվիրատուի կողմից ստանալու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիրքորոշմանը, որ Պատվիրատուի 11.08.2016թ. պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության մեջ ընդամենը նշվել է, որ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված պահանջներին, սակայն հստակ չի նկարագրվել, թե մասնակիցը կոնկրետ ինչ սխալ է թույլ տվել, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին, ապա Խորհուրդը հայտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.08.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով արձանագրել է առկա բոլոր անհամապատասխանությունները, իսկ 09.08.2016թ. ժամը 18:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները շտկող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Վահրադյան Շին» ՍՊԸ-ի կողմից 19.08.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ **Հայրապետյան Գևորգ**

Անդամ՝ **Սարգսյան Մարիամ**